Գրանցված է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

արդարադատության նախարարության կողմից

«_____» _____ 2014թ.

Պետական գրանցման համարը _____

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«01» հուլիսի 2014թ. N55-Ն

ք. Ստեփանակերտ

ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ՀԱՎԻ, ԲԱՂԻ, ՍԱԳԻ, ՀՆԴԿԱՀԱՎԻ, ԽԱՅՏԱՀԱՎԻ, ԼՈՐԻ ՃՎԻ ԻՆԿՈՒԲԱՑԻԱՅԻ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ)ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 26-ի N 245 որոշումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող հավի, բադի, սագի, հնդկահավի, խայտահավի, լորի ձվի ինկուբացիայի փաստացի կորստի (բնական կորստի) չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին՝

1) սույն հրամանի 1-ին կետով սահմանված չափերը եռօրյա ժամկետում ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն՝ համաձայնեցման.

2) սույն հրամանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավար Ս.Բաղդասարյանին:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Համաձայնեցված է՝
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր
հարկային պետական ծառայության պետ
_____ Ա.ԲԱԼԱՅԱՆ
_____ _____ 2014թ.

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2014 թվականի հուլիսի 01 -ի
N 55-Ն հրամանի

Չ Ա Փ Ե Ր

ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ՀԱՎԻ, ԲԱԴԻ, ՍԱԳԻ, ՀՆԴԿԱՀԱՎԻ, ԽԱՅՏԱՀԱՎԻ, ԼՈՐԻ ՁՎԻ ԻՆԿՈՒԲԱՑԻԱՅԻ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն նորմատիվ իրավական ակտը սահմանում է հավի, բադի, սագի, հնդկահավի, խայտահավի, լորի ձվի ինկուբացիայի ընթացքում առաջացող բնական կորուստների թույլատրելի սահմանային չափերը:
2. Ձվի ինկուբացման ընթացքում առաջացող բնական կորուստները հետևանք են դրանցում ընթացող ֆիզիկաքիմիական պրոցեսների և օդերևութաբանական գործոնների ազդեցության, տրանսպորտային միջոցների օգտագործման, ինչպես նաև պահպանման ժամանակ դրանց որակական ու քանակական պարամետրերի փոփոխություններից առաջացած կորուստների:
3. Բնական կորուստներին չեն դասվում հավի, բադի, սագի, հնդկահավի, խայտահավի, լորի ինկուբացվող ձվի ինկուբացիայի ընթացքում ստանդարտների, տեխնիկական պայմանների, տեխնիկական շահագործման և պահպանման կանոնների, ինչպես նաև տեխնոլոգիական պահանջների խախտման հետևանքով առաջացած կորուստները:

II. ՀԱՎԻ, ԲԱԴԻ, ՍԱԳԻ, ՀՆԴԿԱՀԱՎԻ, ԽԱՅՏԱՀԱՎԻ ԵՎ ԼՈՐԻ ՁՎԻ ԻՆԿՈՒԲԱՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ) ՉԱՓԵՐԸ (ՏՈԿՈՄՆԵՐՈՎ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ)

4. Ինկուբացվող ձվի ինկուբացիայի ժամանակահատվածում բնական կորուստների չափերը կազմում են՝
   1) հավի ձվի ինկուբացիա ՝ 18,5%.
   2) բադի ձվի ինկուբացիա ՝ 20,0%.
   3) սագի ձվի ինկուբացիա ՝ 27,3%.
   4) հնդկահավի ձվի ինկուբացիա ՝ 26,7%.
   5) խայտահավի ձվի ինկուբացիա ՝ 25,0%.
   6) լորի ձվի ինկուբացիա ՝ 30,0%.: